

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

2000թ. հունվար-փետրվարին Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը կազմել է 96958.4 մլն.դրամ և 1999թ. հունվար-փետրվարի համեմատ դրա աճի տեմպը կազմել է 101.4 տոկոս: Դրա հետ մեկտեղ, նշված ժամանակաշրջանում նկատվել է շինարարության (11.9 տոկոսային կետով) և գյուղատնտեսության (0.5 տոկոսային կետով) ճյուղերում արտադրանքի արտադրության նվազեցում: Հարկ է նշել, որ տնտեսության բազային մնացած ճյուղերում նկատվել է արտադրանքի աճ: Այսպես, արտադրանքի աճի տեմպը արդյունաբերության ճյուղում կազմել է 101.0 տոկոս, առևտրի և հասարակական սննդի ճյուղում՝ 114.5 տոկոս և տրանսպորտի ու կապի ճյուղում՝ 105.6 տոկոս: